



Հաստատված է

Մաթեմատիկայի և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի

թիվ 4 նիստում

"_29_" __11__ 2022թ.

ԱՄԲԻՈՆԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| <p>Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը:</p> |
| <p>Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալը կազմում է 12652 ժամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 162 ժամով, և կատարվել է ամբողջությամբ:</p> |
| <p>Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը:</p> |
| <p>Ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը պարբերաբար քննարկվել են ամբիոնի նիստերում, իրականացվել են աշխատանքային քննարկումներ դասախոսների և ուսանողների շրջաններում, ինչպես նաև կազմակերպվել են գիտաժողովներ, որտեղ զեկուցել են նաև Մաթեմատիկա մասնագիտության ուսանողները:</p> |
| <p>Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները:</p> |
| <p>Ամբիոնը կիրառում է ուսանողների գնահատման այն համակարգը, որը ընդունել և հաստատել է համալսարանի գիտական խորհուրդը, իսկ գնահատման բաղադրիչները ընտրելիս առաջնորդվել է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորի տրամադրած շրջաբերականներով և ֆակուլտետային խորհրդի ընդունած որոշումները: Ամբիոնի կողմից մշակվել են գնահատման բաղադրիչները և չափանիշները ռեֆերատների, PP ներկայացումների, գրավոր աշխատանքների, ընթացիկ աշխատանքների, հանրագումարային ամփոփիչ ստուգումների համար:</p> |
| <p>ՌԵՖԵՐԱՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ</p> <p>Ռեֆերատի կատարումը ենթադրում է ուսանողի կողմից ներքոհիշյալ 3 բաղադրիչների կատարում՝ $100\%=20\%+40\%+40\%$.</p> <p>ԲԱՂԱԴՐԻՉ 1. Ռեֆերատի ձևավորման համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և</p> <p>(20%) պահանջներին:</p> <p>ԲԱՂԱԴՐԻՉ 2. Ռեֆերատի բովանդակության համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և</p> |

(40%) պահանջներին:

ԲԱՂԱԴՐԻՉ 3. Ուսանողի կողմից ռեֆերատի բովանդակությանը տիրապետման և ներկայացման մակարդակը:

(40%)

Վերոնշյալ բաղադրիչների ամբողջական և արդյունավետ կատարման համար ուսանողը գնահատվում է առավելագույնը 100 միավոր հետևյալ չափանիշներով:

ՌԵՖԵՐԱՏԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

| ԲԱՂԱԴՐԻՉ | ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | | |
|--|---|--|--|---|
| 1-ԻՆ | 16-20 միավոր | 11-15 միավոր | 6-10 միավոր | 0-5 միավոր |
| <p>Ռեֆերատի ձևավորման համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և պահանջներին:</p> <p>Առավելագույնը՝ 20 միավոր</p> | <p>Ռեֆերատն ամբողջությամբ ճիշտ է ձևավորված. ընդհանուր կառուցվածքը, տիտղոսաթերթը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը, համապատասխանում են դասախոսի կողմից ներկայացված պահանջներին: Բանաձևերը, աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, գծագրերը ձևավորված են հստակ և պատկերավոր: Ճիշտ են կատարված հղումները,</p> | <p>Ռեֆերատը գրեթե ամբողջությամբ ճիշտ է ձևավորված. կառուցվածքը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը ոչ ամբողջությամբ են համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, կան որոշ անհամապատասխանություններ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումների մեջ: Գրական աղբյուրները և հղումները</p> | <p>Ռեֆերատը ձևավորված է բազմաթիվ սխալներով. կառուցվածքը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը հիմնականում չեն համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, կան բավականին շատ անհամապատասխանություններ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումները անհստակ են և անկանոն: Գրական աղբյուրները և հղումները</p> | <p>Ռեֆերատը ամբողջությամբ սխալ է ձևավորված. կառուցվածքը, լուսանցքները, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը չեն համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, անհրաժեշտ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումները անհստակ են և անկանոն: Գրական աղբյուրները և հղումները</p> |

| | պահանջվող ձևաչափով են ներկայացված գրական աղբյուրները: | ներկայացված են որոշ սխալներով: | հղումները ներկայացված են սխալներով: | բացակայում են կամ ներկայացված են էական սխալներով: |
|------|---|-----------------------------------|---|---|
| 2-ԲԴ | 30-40 միավոր | 15-29 միավոր | 6-14 միավոր | 0-5 միավոր |

| | | | | |
|---|---|--|---|--|
| <p>Ռեֆերատի բովանդակության համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և պահանջներին:</p> <p>Առավելագույնը՝ 40 միավոր</p> | <p>Ռեֆերատի բովանդակությունը համապատասխանում է թեմային: Բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող պահանջներին:</p> <p>Ներածությունը բովանդակում է թեմայի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, խնդրո առարկայի մշակման բազային տվյալների հիմնավորումը, արդիականությունը: Ճիշտ են ձևակերպված նպատակը, խնդիրները, մեթոդները, որոնք կազմում են տրամաբանական ամբողջություն: Հիմնական մասն ընդգրկում է կատարված աշխատանքի բովանդակությունը, հիմնական արդյունքները ամփոփիչ տվյալները, առաջադրված խնդիրների լուծման մեթոդները, ուղիները և դրանց համեմատական</p> | <p>Ռեֆերատի բովանդակությունը հիմնականում համապատասխանում է թեմային: Բովանդակությունը հիմնականում համապատասխանում է ներկայացվող պահանջներին:</p> <p>Ներածությունը հիմնականում բովանդակում է թեմայի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, խնդրո առարկայի տվյալների հիմնավորումը, արդիականությունը: Թեև կան որոշ սխալներ, սակայն հիմնականում ճիշտ են ձևակերպված նպատակը, խնդիրները, մեթոդները, չի ապահովված տրամաբանական ամբողջությունը: Հիմնական մասն ընդգրկում է կատարված աշխատանքի բովանդակությունը, առաջադրված խնդիրների լուծման մեթոդները, ուղիները և դրանց</p> | <p>Ռեֆերատի բովանդակությունը մասամբ է համապատասխանում թեմային: Բովանդակությունը հիմնականում չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:</p> <p>Ներածությունը հիմնականում չի բովանդակում թեմայի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, խնդրո առարկայի մշակման բազային տվյալների հիմնավորումը, արդիականությունը: Հիմնականում սխալ են ձևակերպված նպատակը, խնդիրները, մեթոդները, տրամաբանական ամբողջությունը խախտված է: Հիմնական մասը գրեթե չի պարունակում կատարված աշխատանքի բովանդակությունը, առաջադրված խնդիրների լուծման մեթոդները,</p> | <p>Ռեֆերատի բովանդակությունն ամբողջությամբ չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:</p> <p>Ներածությունը չի բովանդակում թեմայի վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, արդիականությունը: Ամբողջությամբ սխալ են ձևակերպված նպատակը, խնդիրները, մեթոդները, բացակայում է տրամաբանական ամբողջությունը: Հիմնական մասը չի պարունակում կատարված աշխատանքի բովանդակությունը, առաջադրված խնդիրների լուծման մեթոդները, ուղիները և դրանց համեմատական վերլուծությունը, մշակված գործողությունները և սկզբունքները և բնութագրերը ներկայացված չեն: Եզրակացությունը</p> |
|---|---|--|---|--|

| | | | | |
|------|--|---|---|--|
| | <p>վերլուծությունը, արդյունքների գնահատումը և ընդհանրացումը: Եզրակացությունն արտացոլում է աշխատանքի ամփոփումը: Եզրահանգումներն ու առաջարկությունները ներկայացված են առանձին կետերով, հակիրճ, մատչելի, հստակ, ամբողջությամբ համապատասխանում են նպատակին և խնդիրներին: Շարադրված է գրագետ, ճիշտ են օգտագործված մասնագիտական հասկացությունները: Ուսանողն օգտագործել է նոր, ժամանակակից գրականություն:</p> | <p>համեմատական վերլուծությունը, արդյունքների գնահատումը և ընդհանրացումը: Եզրակացությունը հիմնականում արտացոլում է աշխատանքի ամփոփումը: Եզրահանգումներն ու առաջարկությունները ներկայացված են ոչ շատ հստակ, մի փոքր երկար ու խրթին են ձևակերպված, ոչ ամբողջությամբ են համապատասխանում նպատակին և խնդիրներին: Շարադրված է հիմնականում գրագետ, կան սխալ օգտագործված մասնագիտական հասկացություններ :</p> <p>Ուսանողը հիմնականում օգտագործել է ժամանակակից գրականություն:</p> | <p>ուղիները և դրանց համեմատական վերլուծությունը, մշակված գործողություններ ի սկզբունքները և բնութագրերը գրեթե ներկայացված չեն: Եզրակացությունը հիմնականում չի արտացոլում աշխատանքի ամփոփումը: Եզրահանգումներն ու առաջարկությունները ներկայացված են անհստակ, երկար ու խրթին են ձևակերպված, գրեթե չեն համապատասխանում նպատակին և խնդիրներին: Շարադրված է ոչ գրագետ, կան բազմաթիվ սխալ օգտագործված մասնագիտական հասկացություններ: Ուսանողն օգտագործել է հիմնականում ոչ ժամանակակից գրականություն:</p> | <p>չի արտացոլում աշխատանքի ամփոփումը: Եզրահանգումներն ու առաջարկությունները հստակ առանձին կետերով ներկայացված չ են, ձևակերպված են երկար ու խրթին, չեն համապատասխանում նպատակին և խնդիրներին: Շարադրված է ոչ գրագետ, կան բազմաթիվ սխալ օգտագործված մասնագիտական հասկացություններ: Ուսանողը անհրաժեշտ գրականություն չի օգտագործել, օգտվել է միայն էլեկտրոնային պատրաստի նյութերից՝ առանց լրամշակման և տեղայնացման:</p> |
| 3-ԸԴ | 30-40 միավոր | 15-29 միավոր | 1-14 միավոր | 0 միավոր |

| | | | | |
|--|---|---|--|--|
| <p>Ռեֆերատի բովանդակությանը և սանդղի տիրապետման և ներկայացման մակարդակը:</p> <p>Առավելագույնը՝ 40 միավոր</p> | <p>Ուսանողն ամբողջությամբ տիրապետում է ռեֆերատի բովանդակությանը, կարողանում է գրագետ և սահուն ներկայացնել այն, մեկնաբանել հիմնական հասկացությունները, կատարել ինքնուրույն վերլուծություններ, համեմատություններ, եզրահանգումներ: Դասախոսի հարցերին տալիս է սպառիչ և ամբողջական, գրագետ, տրամաբանված պատասխաններ:</p> | <p>Ուսանողը հիմնականում տիրապետում է ռեֆերատի բովանդակությանը, կարողանում է գրագետ ներկայացնել այն, դժվարությամբ մեկնաբանել հիմնական հասկացությունները, կատարել ինքնուրույն վերլուծություններ, եզրահանգումներ: Դասախոսի հարցերին տալիս է ոչ սպառիչ և ոչ ամբողջական, սակայն հիմնականում տրամաբանված պատասխաններ:</p> | <p>Ուսանողը մասամբ է տիրապետում ռեֆերատի բովանդակությանը, չի կարողանում գրագետ ներկայացնել այն, հիմնականում սխալ է մեկնաբանում հասկացությունները, չի կարողանում ինքնուրույն վերլուծություններ , եզրահանգումներ կատարել: Դասախոսի հարցերին չի կարողանում հստակ, համակարգված և տրամաբանված պատասխանել:</p> | <p>Ուսանող չի կարողանում ներկայացնել ռեֆերատի բովանդակությունը, մեկնաբանել հիմնական հասկացությունները: Դասախոսի հարցերին ընդհանրապես չի կարողանում պատասխանել:</p> |
|--|---|---|--|--|

PP ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴԴՐՉՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

PP ներկայացման կատարումը ենթադրում է ուսանողի կողմից ներքոհիշյալ 3 բաղադրիչների կատարում՝ 100%=30%+30%+40%.

ԲԱՂԱԴԴՐՉ 1. PP ներկայացման ձևավորման համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և

(30%) պահանջներին:

ԲԱՂԱԴԴՐՉ 2. PP ներկայացման բովանդակության համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և պահանջներին:

(30%)

ԲԱՂԱԴԴՐՉ 3. Ուսանողի կողմից PP ներկայացման բովանդակությանը տիրապետման և ներկայացման մակարդակը:

(40%)

Վերոնշյալ բաղադրիչների ամբողջական և արդյունավետ կատարման համար ուսանողը գնահատվում է առավելագույնը 100 միավոր հետևյալ չափանիշներով:

PP ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

| ԲԱՂԱԴՐԻՉ | ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | | |
|--|---|--|--|---|
| 1-ԻՆ | 25-30 միավոր | 17-24 միավոր | 9-16 միավոր | 0-8 միավոր |
| <p>PP ներկայացման ձևավորման համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և պահանջներին:</p> <p>Առավելագույնը՝ 30 միավոր</p> | <p>PP ներկայացումն ամբողջությամբ ճիշտ է ձևավորված. ընդհանուր կառուցվածքը, տիտղոսաթերթը, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը, համապատասխանում են դասախոսի կողմից ներկայացված պահանջներին: Բանաձևերը, աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, գծագրերը պատկերված են հստակ և ընկալելի, տեքստային ձևակերպումները հակիրճ են և արտահայտիչ, պահանջվող ձևաչափով են ներկայացված գրական աղբյուրները:</p> | <p>PP ներկայացումը գրեթե ամբողջությամբ ճիշտ է ձևավորված. կառուցվածքը, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը ոչ ամբողջությամբ են համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, կան որոշ անհամապատասխանություններ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումների մեջ, տեքստային ձևակերպումների հակիրճությունը պահպանված են ոչ միշտ: Գրական աղբյուրները ներկայացված են որոշ սխալներով:</p> | <p>PP ներկայացումը ձևավորված է բազմաթիվ սխալներով. կառուցվածքը, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը հիմնականում չեն համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, կան բավականին անհամապատասխանություններ բանաձևերի, աղյուսակների, դիագրամների, գրաֆիկների, գծագրերի ձևավորումների մեջ, չի պահպանված տեքստային ձևակերպումների հակիրճությունը: Գրական աղբյուրները ներկայացված են սխալներով:</p> | <p>PP ներկայացումն ամբողջությամբ սխալ է ձևավորված. կառուցվածքը, տառաչափը, տողերի միջև հեռավորությունը, տառատեսակը չեն համապատասխանում դասախոսի կողմից ներկայացված պահանջներին, ծավալը 5 սլայդից պակաս է: տեքստային շարադրանքը ներկայացված է երկարաշունչ նախադասություններով, տեքստը և գրական աղբյուրները ներկայացված են բազմաթիվ սխալներով:</p> |

| 2-ԸԴ | 25-30 միավոր | 17-24 միավոր | 9-16 միավոր | 0-8 միավոր |
|---|---|---|--|--|
| <p>PP ներկայացման բովանդակության համապատասխանությունը դասախոսի կողմից ներկայացված չափանիշներին և պահանջներին:</p> <p>Առավելագույնը՝ 30 միավոր</p> | <p>PP ներկայացման բովանդակությունը համապատասխանում է թեմային: Բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող պահանջներին, պատկերված բանաձևերը, աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, գծագրերը նպատակային են, լրացնում են բովանդակությունը:</p> <p>Շարադրված է գրագետ, ճիշտ են օգտագործված մասնագիտական հասկացությունները: Ուսանողն օգտագործել է ժամանակակից տեխնոլոգիական հնարներ:</p> | <p>PP ներկայացման բովանդակությունը հիմնականում համապատասխանում է թեմային: Բովանդակությունը հիմնականում համապատասխանում է ներկայացվող պահանջներին:</p> <p>Պատկերված բանաձևերը, աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, գծագրերը հիմնականում համապատասխանում են բովանդակությանը: Շարադրված է հիմնականում գրագետ, կան ոչ տեղին օգտագործված մասնագիտական հասկացություններ:</p> <p>Ուսանողը հիմնականում օգտագործել է ժամանակակից տեխնոլոգիական հնարներ:</p> | <p>PP ներկայացման բովանդակությունը մասամբ է համապատասխանում թեմային: Բովանդակությունը հիմնականում չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:</p> <p>Պատկերված բանաձևերը, աղյուսակները, դիագրամները, գրաֆիկները, գծագրերը անկանոն են և քիչ են նպաստում բովանդակության ներկայացմանը: Շարադրված է ոչ գրագետ, կան բազմաթիվ սխալ օգտագործված մասնագիտական հասկացություններ: Ուսանողը արդյունավետ չի օգտագործել ժամանակակից տեխնոլոգիական հնարները:</p> | <p>PP ներկայացման բովանդակությունն ամբողջությամբ չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:</p> <p>Շարադրված է ոչ գրագետ, կան բազմաթիվ սխալ օգտագործված մասնագիտական հասկացություններ: Ուսանողը չի օգտագործել բովանդակության ներկայացման վերաբերյալ բանաձևեր, աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկներ, գծագրեր կամ էլ դրանք ներկայացված են էական սխալներով: Ուսանողը արդյունավետ չի օգտագործել ժամանակակից տեխնոլոգիական հնարները:</p> |
| 3-ԸԴ | 30-40 միավոր | 15-29 միավոր | 1-14 միավոր | 0 միավոր |

| | | | | |
|--|--|---|--|--|
| <p>PP ներկայացման բովանդակությանը ուսանողի տիրապետման և ներկայացման մակարդակը:</p> <p>Առավելագույնը՝ 40 միավոր</p> | <p>Ուսանողը կարողանում է դասընթացի շրջանակներում ընտրված 1 թեմային համապատասխան պատրաստել և ներկայացնել ներկայացում (սլայդ շոու): Ներկայացումը կառուցված է ուսումնական նյութի, թեմայի բովանդակությանը համապատասխան , առանձնացված են հիմնական, առանցքային դրույթները, սլայդների հաջորդականության մեջ պահպանված է նյութի տրամաբանությունը: Սլայդերը գունային, կոնտրաստային, տեխնիկական առումով հաջողված են, ներառված են աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, սխեմաներ: Ուսանողը կարողանում է ներկայացմանը համապատասխան գրագետ, մասնագիտական</p> | <p>Ուսանողը կարողանում է դասընթացի շրջանակներում ընտրված 1 թեմային համապատասխան պատրաստել և ներկայացնել ներկայացում (սլայդ շոու): Ներկայացումը կառուցված է ուսումնական նյութի, թեմայի բովանդակությանը համապատասխան , հստակ չեն առանձնացված հիմնական, առանցքային դրույթները, սլայդերի հաջորդականության մեջ պահպանված է նյութի տրամաբանությունը: Սլայդերը գունային, կոնտրաստային, տեխնիկական առումով հաջողված չեն, աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, սխեմաներ շատ քիչ են ընդգրկված: Ուսանողը դժվարանում է ներկայացմանը համապատասխան գրագետ,</p> | <p>Ուսանողը կարողանում է դասընթացի շրջանակներում ընտրված 1 թեմային համապատասխան պատրաստել և ներկայացնել ներկայացում (սլայդ շոու): Ներկայացումը կառուցված չէ ուսումնական նյութի, թեմայի բովանդակությանը համապատասխան, առանձնացված չեն հիմնական, առանցքային դրույթները, սլայդերի հաջորդականության մեջ պահպանված չէ նյութի տրամաբանությունը: Սլայդերը գունային, կոնտրաստային, տեխնիկական առումով շատ թույլ են, աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, սխեմաներ ընդգրկված չեն: Ուսանողը չի կարողանում ներկայացմանը համապատասխան ներկայացնել</p> | <p>Ուսանողը չի կարողանում դասընթացի շրջանակներում ընտրված 1 թեմային համապատասխան պատրաստել և ներկայացնել PP- ներկայացում (սլայդ շոու):</p> |
|--|--|---|--|--|

| | | | | |
|--|--|---|---------|--|
| | լեզվով ներկայացնել նյութը, հիմնավոր պատասխաններ տալ դասախոսի կողմից առաջադրված հարցերին: | մասնագիտական լեզվով ներկայացնել նյութը: | նյութը: | |
|--|--|---|---------|--|

ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ընթացիկ աշխատանքների կատարումը ենթադրում է ուսանողի կողմից ներքոհիշյալ 2 բաղադրիչների կատարում՝ 100%=40%+60%

ԲԱՂԱԴՐԻՉ 1. Գործնական աշխատանքներին ուսանողների մասնակցության ակտիվությունը:

(40%)

ԲԱՂԱԴՐԻՉ 2. Գործնական պարապմունքների ընթացքում դասախոսի կողմից տրված հանձնարարությունների

(60%) կատարման արդյունավետությունը:

Վերոնշյալ բաղադրիչների ամբողջական և արդյունավետ կատարման համար ուսանողը գնահատվում է առավելագույնը 100 միավոր հետևյալ չափանիշներով:

ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

| ԲԱՂԱԴՐԻՉ | ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | | |
|----------|--------------|--------------|-------------|------------|
| 1-ԻՆ | 30-40 միավոր | 19-29 միավոր | 5-19 միավոր | 0-4 միավոր |

| | | | | |
|---|---|--|---|--|
| <p>Գործնական աշխատանքներին ուսանողների մասնակցության ակտիվությունը</p> <p>Առավելագույնը՝</p> <p>40 միավոր</p> | <p>Ուսանողը մասնակցել է դասացուցակով նախատեսված բոլոր գործնական պարապմունքների ն: Ակտիվություն է դրսևորել սեմինար և գործնական պարապմունքների համար նախատեսված թեմաների քննարկման, հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում: Ուսանողն ինքն է նախաձեռնել որոշ դերային խաղեր, առաջարկել թեմաներ քննարկման, բանավեճերի համար:</p> | <p>Ուսանողը մասնակցել է դասացուցակով նախատեսված գործնական պարապմունքներ ի 50-70%-ին: Սեմինար և գործնական պարապմունքներ ի համար նախատեսված թեմաների քննարկման, հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում եղել է հիմնականում ակտիվ, քննարկման, բանավեճերի թեմաներ չի առաջարկել:</p> | <p>Ուսանողը մասնակցել է դասացուցակով նախատեսված գործնական պարապմունքներ ի 20-50%-ին: Սեմինար և գործնական պարապմունքներ ի համար նախատեսված թեմաների քննարկման, հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում հիմնականում ակտիվ չի եղել, քննարկման, բանավեճերի թեմաներ չի առաջարկել:</p> | <p>Ուսանողը մասնակցել է դասացուցակով նախատեսված գործնական պարապմունքներ ի 0-20%-ին: Սեմինար և գործնական պարապմունքներ ի համար նախատեսված թեմաների քննարկման, հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում ընդհանրապես ակտիվ չի եղել, քննարկման, բանավեճերի թեմաներ չի առաջարկել:</p> |
| <p>2-ԸԴ</p> | <p>50-60 միավոր</p> | <p>30-49 միավոր</p> | <p>9-29 միավոր</p> | <p>0-8 միավոր</p> |

| | | | | |
|---|--|---|--|--|
| <p>Գործնական պարապմունքների ընթացքում դասախոսի կողմից տրված հանձնարարությունների կատարման արդյունավետությունը</p> <p>կատարման արդյունավետությունը</p> <p>Առավելագույնը՝ 60 միավոր</p> | <p>Ուսանողն արդյունավետորեն կատարել է սեմինար և գործնական պարապմունքների համար նախատեսված հանձնարարությունները, արդյունքում ներկայացրել է ուսումնասիրված թեմաների շրջանակներում ինքնուրույն եզրահանգումներ ու առաջարկություններ: Գործնական հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում դրսևորել է նախաձեռնողականություն, ստեղծագործականություն, ինքնուրույնություն , մտքերն ու կարծիքները եղել են ինքնատիպ:</p> | <p>Ուսանող կատարել է սեմինար և գործնական պարապմունքներ ի համար նախատեսված հանձնարարությունները, արդյունքում ներկայացրել է ուսումնասիրված թեմաների շրջանակներում որոշ եզրահանգումներ : Գործնական որոշ հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում ավելի քիչ է դրսևորել նախաձեռնողականություն, ինքնուրույնություն:</p> | <p>Ուսանողը մասնակիորեն կատարել է սեմինար և գործնական պարապմունքներ ի համար նախատեսված հանձնարարությունները, սակայն արդյունքների մասին չի ներկայացրել եզրահանգումներ: Գործնական որոշ հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում գրեթե չի դրսևորել նախաձեռնողականություն, ինքնուրույնություն և ընդհանրապես չի դրսևորել:</p> | <p>Ուսանողը կատարել է սեմինար և գործնական պարապմունքներ ի համար նախատեսված հանձնարարությունների շատ փոքր մասը, արդյունքների մասին չի ներկայացրել եզրահանգումներ : Այդ փոքր քանակով գործնական հանձնարարությունների, անհատական և խմբային գործնական աշխատանքների կատարման, բանավեճերի, տեսաֆիլմերի քննարկման, դերային խաղերի ընթացքում չի դրսևորել նախաձեռնողականություն, ինքնուրույնություն:</p> |
|---|--|---|--|--|

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գրավոր աշխատանքը ենթադրում է ուսանողի կողմից միջանկյալ քննության ընթացքում հարցատոմսում ընդգրկված 3-5 հարցերին տրվող գրավոր պատասխաններ: Տեսական հարցերը գնահատվում են առավելագույնը 30%, իսկ գործնականը՝ 70%: Տոմսում ընդգրկված հարցերին ամբողջական և հստակ գրավոր պատասխանելու դեպքում ուսանողը գնահատվում է առավելագույնը 100 միավոր հետևյալ չափանիշներով՝ $100\%=30\%+70\%$:

| ԲԱՂԱԴՐԻՉ | ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | | |
|--------------------------------|--|--|---|---|
| ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: | Յուրաքանչյուրը 25-30 միավոր | Յուրաքանչյուրը 11-24 միավոր | Յուրաքանչյուրը 1-10 միավոր | Յուրաքանչյուրը 0 միավոր |
| Առավելագույնը 30 միավոր | Ուսանողը հարցերին տվել է հստակ, ամբողջական, սպառիչ գրավոր պատասխան: Հարցերի բովանդակության մասին բացի դասախոսության նյութերում ընդգրկված ծավալը ուսանողը ներկայացրել է լրացուցիչ, ինքնուրույն ձեռք բերված տեղեկատվություն: Տեղեկատվությունը մշակված է տարբեր աղբյուրներից, վերջին տարիներին տպագրված գրականությունից, բովանդակում է տվյալ գիտության ոլորտում վերջին ձեռքբերումները: Ուսանողը գիտամասնագիտա | Ուսանողը հարցերին թեև գրավոր պատասխանել է, բայց ոչ հստակ, ոչ ամբողջական: Հարցերի բովանդակության մասին ներկայացրել է միայն դասախոսության նյութերում ընդգրկված ծավալը, լրացուցիչ, ինքնուրույն տեղեկատվություն ձեռք չի բերել: Ուսանողը գիտամասնագիտական առումով հիմնականում գրագետ է շարադրել պատասխանը, ինչը վկայում է, որ նա մասնակի է տիրապետում նյութին, չի կարողացել հստակորեն | Ուսանողը հարցերին պատասխանել է ոչ հստակ, չի կարողացել կառուցել գրավոր խոսքը: Հարցերի բովանդակության մասին դասախոսության նյութերում ընդգրկված ծավալը ներկայացրել է մասնակիորեն, ոչ ամբողջական, լրացուցիչ, ինքնուրույն տեղեկատվություն ձեռք չի բերել: Ուսանողը գիտամասնագիտական առումով գրագետ չի կարողացել շարադրել պատասխանը, գրավոր խոսքը տրամաբանական հաջորդականություն չունի, չի կարողացել | Ուսանողը ընդհանրապես չի կարողացել պատասխանել հարցերին, ինչը վկայում է, որ նա չի տիրապետում, ծանոթ չէ դասախոսության նյութին: |

| | | | | |
|--------------------------------|---|--|---|--|
| | կան առումով գրագետ է շարադրել պատասխանը, ինչը վկայում է, որ նա ամբողջությամբ տիրապետում է նյութին, կարողացել է հստակորեն մեկնաբանել հիմնական հասկացությունները, կատարել ինքնուրույն վերլուծություններ, եզրահանգումներ: | մեկնաբանել հիմնական հասկացությունները, կատարել ինքնուրույն վերլուծություններ, եզրահանգումներ: | մեկնաբանել հիմնական հասկացությունները և կատարել ինքնուրույն վերլուծություններ, եզրահանգումներ: | |
| ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: | 55-70 միավոր | 39-54 միավոր | 1-38 միավոր | 0 միավոր |
| Առավելագույնը 70 միավոր | Ուսանողը բոլոր առաջադրանքների ն տվել է հստակ, ամբողջական, սպառիչ գրավոր լուծում: Առաջադրանքների կատարման ընթացքում ցուցաբերել է ինքնուրույն մտածելակերպ, գրագետ շարադրել պատասխանը, հիմնավորել պատասխանի ընթացքում օգտագործված մեթոդների ընտրությունը: | ա. Ուսանողը բոլոր առաջադրանքները կատարել է, սակայն ոչ բոլոր առաջադրանքների ն է տվել հստակ և ամբողջական կամ հիմնավոր պատասխան, թերացել է մեթոդների ընտրության մեջ կամ լուծման ընթացքում թերի է կիրառել մեթոդները: բ. Գործնական առաջադրանքների առնվազն 55%-ը կատարել է տալով ինքնուրույն, ամբողջական և հիմնավոր | Ուսանողը առաջադրանքների 45 %-ը կատարել է նկատելի թերություններով, սակայն առաջադրանքների 55 %-ը չի կատարել կամ կատարել է բազմաթիվ էական սխալներով: | Բաղադրիչը կատարված չէ: Ուսանողը ընդհանրապես չի կարողանում պատասխանել հարցերին, չի տիրապետում և ծանոթ չէ լուծման մեթոդներին: |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | պատասխան, սակայն 45%-ը կատարել է ակնհայտ թերացումներով: | | |
|--|--|---|--|--|

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Ամփոփիչ քննությունը ենթադրում է ուսանողի կողմից քննության ընթացքում հարցատոմսում ընդգրկված 3-5 հարցերին բանավոր պատասխաններ: Տեսական հարցերը գնահատվում են առավելագույնը 60%, իսկ գործնականը՝ 40%: Տոմսում ընդգրկված հարցերին ամբողջական և հստակ պատասխանելու դեպքում ուսանողը գնահատվում է առավելագույնը 100 միավոր հետևյալ չափանիշներով՝ $100\%=60\%+40\%$:

| ԲԱՂԱԴՐԻՉ | ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | | |
|--------------------|--|---|--|--|
| | 50-60 միավոր | 26-49 միավոր | 1-25 միավոր | 0 միավոր |
| ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: | | | | |
| 60 միավոր | Ուսանողը հարցերին տալիս է հստակ, ամբողջական, սպառիչ պատասխան: Հարցերի բովանդակության մասին բացի դասախոսության նյութերում ընդգրկված ծավալը ուսանողը ներկայացնում է լրացուցիչ, ինքնուրույն ձեռք բերված տեղեկատվություն: Տեղեկատվությունը | Ուսանողը հարցերին թեն պատասխանում է, բայց ոչ հստակ, ոչ ամբողջական: Հարցերի բովանդակության մասին ներկայացնում է հիմնականում միայն դասախոսության նյութերում ընդգրկված ծավալը, լրացուցիչ, ինքնուրույն տեղեկատվություն չի բերել: Ուսանողը | Ուսանողը հարցերին պատասխանում է դժվարությամբ, ոչ հստակ, չի կարողանում կառուցել խոսքը: Հարցերի բովանդակության մասին դասախոսության նյութերում ընդգրկված ծավալը ներկայացնում է մասնակիորեն, ոչ ամբողջական, լրացուցիչ, ինքնուրույն տեղեկատվություն | Ուսանողը ընդհանրապես չի կարողանում պատասխանել հարցերին, չի տիրապետում, ծանոթ չէ դասախոսության նյութին: |

| | | | | |
|-------------------------|---|--|---|--|
| | <p>մշակված է տարբեր աղբյուրներից, վերջին տարիներին տպագրված գրականությունից, բովանդակում է տվյալ գիտության ոլորտում վերջին ձեռքբերումները: Ուսանողը գիտամասնագիտական առումով գրագետ է շարադրում պատասխանը, ամբողջությամբ տիրապետում է նյութին, կարողանում է հստակորեն մեկնաբանել հիմնական հասկացությունները, կատարել ինքնուրույն վերլուծություններ, եզրահանգումներ:</p> | <p>գիտամասնագիտական առումով հիմնականում գրագետ է շարադրում պատասխանը, մասնակի է տիրապետում նյութին, չի կարողանում հստակորեն մեկնաբանել բոլոր հիմնական հասկացությունները, կատարել ինքնուրույն վերլուծություններ, հիմնավոր եզրահանգումներ:</p> | <p>ձեռք չի բերել: Ուսանողը գիտամասնագիտական առումով գրագետ չի կարողանում շարադրել պատասխանը, խոսքը տրամաբանական հաջորդականություն չունի, չի կարողանում մեկնաբանել հիմնական հասկացությունները և կատարել ինքնուրույն վերլուծություններ, եզրահանգումներ:</p> | |
| ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ: | 35-40 միավոր | 23-34 միավոր | 1-22 միավոր | 0 միավոր |
| Առավելագույնը 40 միավոր | <p>Ուսանողը բոլոր առաջադրանքների ն տվել է հստակ, ամբողջական, սպառիչ գրավոր լուծում և դասախոսի կողմից առաջադրման դեպքում կարողանում է հիմնավոր պատասխաններ</p> | <p>ա. Ուսանողը բոլոր առաջադրանքները կատարել է, սակայն ոչ բոլոր առաջադրանքների ն է տվել հստակ և ամբողջական կամ հիմնավոր պատասխան, թերացել է մեթոդների ընտրության մեջ</p> | <p>Ուսանողը առաջադրանքների 45 %-ը կատարել է նկատելի թերություններով, սակայն 55 %-ը չի կատարել կամ կատարել է բազմաթիվ էական սխալներով:</p> | <p>Բաղադրիչը կատարված չէ: Ուսանողը ընդհանրապես չի կարողանում պատասխանել հարցերին, չի տիրապետում և ծանոթ չէ լուծման մեթոդներին:</p> |

| | | | | |
|--|---|--|--|--|
| | <p>տալ լուծմանը վերաբերող հարցերին: Առաջադրանքների կատարման ընթացքում ցուցաբերել է ինքնուրույն մտածելակերպ, գրագետ շարադրել պատասխանը, հիմնավորել պատասխանի ընթացքում օգտագործված մեթոդների ընտրությունը:</p> | <p>կամ լուծման ընթացքում թերի է կիրառել մեթոդները: բ.Գործնական առաջադրանքների առնվազն 55 %-ը կատարել է տալով ինքնուրույն, ամբողջական և հիմնավոր պատասխան, սակայն 45%-ը կատարել է ակնհայտ թերացումներով:</p> | | |
|--|---|--|--|--|

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:

Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ընդունված որոշումները նշված են ստորև բերված աղյուսակում:

| | | |
|--|--|---|
| <p>Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները:</p> | | |
| Արձ.Ն, ամսաթիվ | Քննարկման հարցերը | Ընդունված որոշումները |
| N 7, 26.01 | Ամբիոնի 2021–2022 ուստարվա 2–րդ կիսամյակի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում: | Հաստատել 2021–2022 ուստարվա 2–րդ կիսամյակի աշխատանքային պլանը: |
| N 7, 26.01 | 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և առկա ու հեռակա ուս. ձևերի ընտրովի դասընթացների | Հաստատել 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և առկա ու հեռակա ուս. ձևերի մագիստրատուրայում ընտրովի դասընթացները: |

| | | |
|------------|---|---|
| | հաստատում: | |
| N 7, 26.01 | 2021–2022 ուս. տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում: | 1-ին կիսամյակի քննությունների արդյունքները համարել բավարար: |
| N 7, 26.01 | Առկա մագիստրատուրա 2-րդ, հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսերի մագիստրոսական թեզերի և առկա բակալավր 4-րդ և հեռակա բակալավր 5-րդ կուրսերի ավարտական աշխատանքների ատեստացիա: | Առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ատեստացիան կազմակերպել փետրվարի 4-ին: Հեռակա մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ատեստացիան կազմակերպել փետրվարի 8-ին: Առկա բակալավր 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների ատեստացիան կազմակերպել փետրվարի 7-ին: Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ատեստացիան՝ մարտի 10-ին: |
| N 7, 26.01 | Classroom էլեկտրոնային հարթակում 1-ին կիսամյակի մոնիթորինգի արդյունքների ամփոփում: | Ամբիոնի որակի պատասխանատուն ներկայացրել է 1-ին կիսամյակի մոնիթորինգի արդյունքները: Կիսամյակի ընթացքում շտկվել են բոլոր թերությունները, արդյունքները ներկայացվել են ամբիոնի որակի պատասխանատույի հաշվետվությունում: |
| N 8, 28.02 | Ամբիոնի հայցորդներ Աննա Ներսեսյանի և Մանե Սևաջյանի գիտական թեմաների և ղեկավարների քննարկման և հաստատման հարցը: | Հաստատել հայցորդ Աննա Ներսեսյանի ատենախոսության թեման՝ «Վերառարկայական կարողությունների ձևավորումը բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման գործընթացում» (ԺԳ.00.02 Դասավանդման և ուսուցման մեթոդիկա մասնագիտությամբ) և թեմայի գիտական ղեկավար նշանակել Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու Մանուկ Մկրտչյանին: Առաջարկել հայցորդ Մանե Սևաջյանի |

| | | |
|-------------|--|--|
| | | ատենախոսության թեման՝ «Ֆունկցիոնալ հավասարումները միակողմանի քվադրիմբերում» (Ա 01.06– Հանրահաշիվ և թվերի տեսություն մասնագիտությամբ) և թեմայի գիտական ղեկավար նշանակել ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիդով Սերգեյին: |
| N 8, 28.02 | Ատեստացիայի արդյունքների ամփոփում: | Ատեստավորվել են բոլոր ուսանողները: Տեղ գտած թերությունները քննարկվել են ուսանողի և ղեկավարի հետ համատեղ: Որոշել են շտկել մինչև հաջորդ հանդիպումը: |
| N 9, 24.03 | Միջազգային գիտաժողովի նախապատրաստում: | Ամբիոնը որոշեց մասնակցել ՀՊՄՆ -ի 100 ամյակին նվիրված “Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները” խորագրով միջազգային գիտաժողովին առանձին բաժանմունքով: |
| N 9, 24.03 | Գ.Ռ. Ղուլդագարյանի և Լ.Գ. Ղուլդագարյանի «Մաթեմատիկական անալիզ: Ինտեգրալ հաշիվ» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը : | (16 կողմ , 1 ձեռնպահ քվեարկության արդյունքում)՝ Գ. Ռ. Ղուլդագարյանի և Լ. Գ. Ղուլդագարյանի «Մաթեմատիկական անալիզ: Ինտեգրալ հաշիվ» ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության, և ուղարկել ՄՖԻ խորհուրդ միջնորդելու ՀՊՄՆ –ի գիտական խորհրդին տպագրության երաշխավորություն ստանալու համար: |
| N 10, 04.04 | Բակալավր 4-րդ կուրսի ա խմբի ավարտական աշխատանքների ատեստավորում: | Ատեստավորել ներկայացված աշխատանքները և երաշխավորել նախապաշպանության: |
| N 11, 04.04 | Բակալավր 4-րդ կուրսի բ խմբի ավարտական աշխատանքների ատեստավորում: | Ատեստավորել ներկայացված աշխատանքները և երաշխավորել նախապաշպանության: |
| N 12, 14.04 | Մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի ատեստավորում: | Ատեստավորել ներկայացված աշխատանքները և երաշխավորել նախապաշպանության: |
| N 13, 26.04 | 2021-2022 ուս տարվա 2-րդ | Ընդունել ի գիտություն: |

| | | |
|-------------|--|--|
| | կիսամյակի քննաշրջանի ամփոփում: | |
| N 13, 26.04 | Հեռակա բակալավրիատ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ավարտի մասին: | Քննարկվեց հեռակա բակալավրիատ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքները: Արտառոց դեպքեր չեն գրանցվել, պրակտիկան անցել է բավարար: |
| N 13, 26.04 | Առկա բակալավրիատ 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների և առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության ամփոփում: | Քննարկվել են նախապաշտպանությունների արդյունքները: Որոշվել է բոլորին երաշխավորվել պաշտպանության |
| N 13, 26.04 | 2021-2022 ուսումնական տարվա առկա մագիստրատուրայի ամփոփիչ որակավորման պետական քննությունների նախապատրաստում : | Քննարկվել են նախապաշտպանությունների արդյունքները: Որոշվել է բոլորին երաշխավորվել պաշտպանության |
| N 14, 19.05 | Առկա բակալավրիատ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ավարտի մասին: | Քննարկվեց առկա բակալավրիատ 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքները: Արտառոց դեպքեր չեն գրանցվել, պրակտիկան անցել է բավարար: |
| N 14, 19.05 | 2021-2022 ուսումնական տարվա հեռակա բակալավրիատ 5-րդ կուրսի ամփոփիչ որակավորման պետական քննության նախապատրաստում: | Քննարկվել են նախապաշտպանությունների արդյունքները: Որոշվել է բոլորին երաշխավորվել պաշտպանության |
| N 14, 19.05 | 2021-2022 ուսումնական տարվա CLASSROOM հարթակում մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասընթացների մշտադիտարկումների արդյունքներ | Ամբիոնի որակի պատասխանատուն ներկայացրել է տարվա մոնիտորինգի արդյունքները: Արդյունքները ներկայացվել են ամբիոնի որակի պատասխանատույի հաշվետվությունում: |
| N 15, 30.06 | Առկա համակարգի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ամփոփում: | Քննարկվել են պաշտպանությունների արդյունքները: Արտառոց դեպքեր չեն գրանցվել: Պաշտպանությունները անցել են բնականոն եղանակով: Բոլոր ուսանողների ու մագիստրոսների ներկայացրած աշխատանքները հաղթահարել եմ դրական շեմը: Աշդյունքները ամփոփված են Ավարտական պետական քննության ամփոփագրերում: |

| | | |
|------------|--|---|
| N 1, 29.08 | Մագիստրոսական թեզերի ղեկավարների փոփոխության հարց: | Հաստատել համապատասխան ղեկավարների փոփոխությունները: |
| N 2, 26.09 | 2022–2023 ուս տարվա 1–ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը: | Հաստատել 2022–2023 ուս տարվա 1–ին կիսամյակի աշխատանքային պլանը: |
| N 2, 26.09 | “Մաթեմատիկա” մասնագիտության կրթական ծրագրերի մասնագրերի վերանայման և հաստատման հարցը | Հաստատել վերանայված և լրամշակած “Մաթեմատիկա” մասնագիտության բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի մասնագրերը |
| N 2, 26.09 | 2022-2023 ուս. տարվա ավարտական աշխատանքների, առկա և հեռակա մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում : | Հաստատել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները: |
